COMMUNIQUÉ DU CONSEIL NATIONAL ARMÉNIEN

ԱՐԵՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՉ - ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ Արցախյան ազատամարտի մասնակիցներս, գիտակցում ենք Արցախի շուրջ զարգացումների արդյունքում հայրենիքի ազատագրված տարածքների հանձնման սպառնալիքը, դրանով իսկ մեզ պարտադրված պատերազմում հայոց լավագույն զավակների նահատակության, մեր ժողովրդի բազում զրկանքների և տառապանքի գնով ձեռք բերված հաղթանակի իմաստազրկման վտանգը:

Խորը վրդովմունքով դատապարտում ենք հայ հանրության պառակտման և բարոյալքման, մի խումբ անձանց կողմից ազգային հարստության թալանի, սոցիալական ծայրահեղ բևեռացման, համատարած աղքատության, ժողովրդի նկատմամբ բռնությունների կիրառման, օտարամոլության, զանգվածային արտագաղթի, մեր ազգային էությանը և հայոց անկախ պետականությանն անհարիր մյուս բոլոր երևույթները: Ամոթալի է, որ այս երևույթները հաջորդել են 1988թ ազգային զարթոնքին: Շեշտում ենք, որ դրանք կատարվել են հայոց հաղթանակը դարբնած ազատամարտիկներին անընդհատ պառակտելու արդյունքում: Համոզված ենք, որ այս ամենի պահպանումը հղի է աղետալի հետևանքներով:

Մենք գիտակցում ենք, որ Հայրենիքում տիրող վիճակով մտահոգ հայորդիների հավաքական ջանքերով է միայն հնարավոր ժողովրդին պաշտպանել արտաքին սպառնալիքներից, ներքին ոտնձգություններից, դիմակայել գալիք մարտահրավերներին, իրականացնել հերոս նահատակների երազանքը, կերտել ազգային պետություն, Հայաստանը դարձնել ստեղծագործական ներշնչանքի աղբյուր և ամենայն հայոց իղձերի փարոս:

Հավատարիմ մնալով մեր կոչմանը և ենթարկվելով պահի հրամայականին, հայտարարում ենք **«Հայ կամավորականների համախմբում»** իրականացնելու մեր նախաձեռնության մասին: Կոչով դիմում ենք բոլոր կամավորականներին, ինչպես նաև հայրենապաշտ, ոգեղեն առնականությամբ լեցուն երիտասարդությանը՝ միանալու ազգօգուտ այս նախաձեռնությանը: Միասնաբար տեր կանգնենք մեր երկրի ապագային, քանզի նվիրյալների վճռական կամքից կծնվեն հայոց վերելքն ու նոր հաղթանակները:

04.12.06